

# ՔԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMÉNIEN

ژارتونک جریدة سياسية أرمنية

Չորեքշաբթի / 20.7.2016

78րդ Տարի, թիվ 232(21,685)

Տարեկան Բաժանորդագին՝ 225,000 L.O.

Վճարովաճար՝ 1000 L.O. / 4 էջ

Էջ 02

### Յօդուած

### Կապույտ Յիշատակներ Զրդեհուած Մելգոնեանէն Դէպի Դասարան

Էջ 03

### Մշակութային Արձագանգ

### Հայկական Բացօթեայ Փառատոս Լոստոնի Մէջ

Էջ 04

### Մարզական

### ԳԵԼ Անդրանիկ Մեան Պարտութեան Մատնէջ Անուարը

### Լիբանանեան Լուրեր

# Ապօրինի Համացանցի Հարցը Դարձեալ Օրակարգի Վրայ

Տեսակէտ

## Պատեհապաշտ, Շահամոլ, Փտած Ու Անպատասխանատու «Պատասխանատուներ»...



Կար ու կար, խեղճ, չարչարուած ու աշխարհի պարտքերու տակ ջուճած, բայց իբր թէ 5000-ամեայ փինիկեցիներու թռռելը ըլլալու, ինչ որ երկնային միջամտութեան մը սպասող՝ վիլայեթի կամ թերակղզիի մը իրենց հաւատակից թագաւորներուն քարիւղին նաեւ առատաձեռնութեան վստահած՝ մեծամտութեան, ցնորքի եւ լաւատեսութեան բեռին տակ կըսծ խեղճ ու կրակ ժողովուրդ մը կար, որ նաեւ կը հաւատար, թէ իր երկիրը կանայք է, արեւելեան Չուիցերիա ու երկնիքէն կտոր մըն է...

Ինչորոշ սակայն այնքան ալ այդ ժողովուրդին խեղճութեան, մեծամտութեան, ցնորքամտութեան կամ աւելորդ լաւատեսութեան մէջ չէր՝ ինչքան անոր գլխուն նստած պատեհապաշտ, շահամոլ, փտած ու այդ ժողովուրդին ճակատագիրին վրայ ազդելու մենաշնորհ ունեցող՝ անպատասխանատու «պատասխանատուներու» գոյութեանը մէջ...: Երկնիքէն երեք խնձոր ինկաւ...:

ՍԵՒԿ ՅԱԿՈԲՅԱՆ

### Շրջանային Լուրեր

## Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարը Աստի Հրաժարականը Կը Պահանջէ

Մեծ Բրիտանիոյ նորանշանակ արտաքին գործոց նախարար Պորիս Ժոնսընը, Սուրիոյ տագնապին վերաբերեալ անսկզկնայ յայտարարութիւն մը կատարելով ցոյց տուաւ, թէ փոխած է իր վերաբերմունքը Սուրիոյ նախագահ Պաշաթ Ալ Բատրի նկատմամբ: Ան կըզ ուղղեց Ռուսիոյ՝ Աստիի վրայ ճնշում բանեցնելու, որպէսզի ան հրաժարական տայ: Ժոնսըն Մեծ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Նշանակուելէ յետոյ առաջին անգամ ըլլալով, Լոնտոնի մէջ հանդիպեցաւ Ռուսիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու իր պաշտօնակիցներուն հետ: «Ես յստակ կ'արտայայտեմ իմ կարծիքս, որ սուրիացի ժողովուրդի տառապանքները չեն ւարարող, քանի որ Կատար, որ պաշտօնակարէ: Միջազգային հանրութիւնը, ընդ որում Ռուսիան պէտք է միասնական ըլլայ այս հարցով», հանդիպումէն առաջ յայտարարեց ժոնսըն: Անոր այս կեցուածքը կը համընկնի Աստիի հարցով Մեծ Բրիտանիոյ նախկին դիրքորոշման եւ կը հակասէ իր նախապէս կատարած յայտարարութիւնները: Ժոնսըն անցեալ տարի Մեծ Բրիտանիոյ կըզ կ'ըներ հրաժարիլ Յուրտ պատերազմի մտածելակերպէն եւ աշխատիլ Աստիի հետ, քանի որ ան շատ աւելի լաւ այլընտրանք է Իսլամական պետութեան (Տաէշ) ահաբեկչական խմբաւորման, որ գրաւած է Սուրիոյ մէկ մասը:



Խորհրդարանի հաղորդակցութեանը եւ տեղեկատուութեան մնայուն յանձնաժողովի նիստին, ընդհանուր դատախազ Սամիր Համուտ ըսաւ, թէ ապօրինի համացանցի թղթածրարը, որ բաժնուած է գանգալի բաժնետերերու կ'ընթանայ դատական անհրաժեշտ ընթացակարգով: Հաղորդակցութեան Նախարար Պոլիս Տարիսի ներկայութեամբ, վերոնշեալ մնայուն Յանձնաժողովը քննարկեց ապօրինի համացանցի հարցը, որու նախագահ երեսփոխան Հասան Ֆատալլա յայտնեց, որ իրենց կատարած են իրենց յանձնարած հարցը քննարկելէ եւ կը շարունակեն գայն հետապնդել՝ մինչեւ որ բոլոր պատասխանատուները բացայտուին եւ պատժուին: Ֆատալլա անցեալ, որ յանձնաժողովը նաեւ ջըննարկած է այս գծով ապօրինաբար Լիբանան բերուած սարքաւորումներու հարցը եւ որոշած է հետապնդել մաքսային ծառայութիւններու այն անդամները, որոնք դիւրացուցած են անոնց երկիր մուտքը: Նաեւ պիտի հետապնդուին ապօրինի համացանցը բանեցնելու՝ մեկուսի շրջաններու մէջ գործող սեփականութեան տեղույն ապահովական ուժերը, որոնք չեն կանխարգիլած այս ապօրինի գործունեութիւնը: Յանձնաժողովը ելեմուտքի եւ արդարադատութեան Նախարարութիւններուն կըզ ուղղեց արժեւորել՝ ապօրինի համացանցին պատճառով պետութեան հասած նիւթական վնասները:

## 64 Տարեկանը Անցած Լիբանանցիներուն Բժշկական Ծառայութիւններ Պիտի Մատուցուին

Վարչապետ Թամունք Սալամ լիբանանցիները շնորհաւորեց՝ 64 տարեկանը հատած լիբանանցիներուն բժշկական ծառայութիւններու մատուցման որոշումի հրապարակման առթիւ, վարչապետարանին մէջ կայացած հանդիսութեան մը ընթացքին: Ան անցեալ, որ Լիբանան պետական պիտոճի նախագիծը մշակած պիտի ըլլայ յաջորդ 2 կամ 3 ամիսներուն: Հանդիսութեան ներկայ էին առողջապահութեան եւ ելեմուտքի նախարարները: Վերջինս որակաւ որակեց ծրագիրը եւ մտղթեց, որ ան յաջողի ու ընդարձակուի՝ ներառելով առողջապահական այլ ծառայութիւններ եւ: Առողջապահութեան նախարար Ռաէլ Ապու Ֆաուր իր կարգին շեշտեց նշեալ ծրագիրի կարեւորութիւնը: Հիւանդանոցներու սեփական նախագահ Սլէման Հալաբի յայտարարեց, որ տնտեսական եւ նիւթական այս դժուարին կացութեան մէջ՝ այսպիսի որոշում անուելը քաջութիւն է, սակայն անհրաժեշտ է ճիշդ քայլերու ձեռնարկել գայն յաջողցնելով:

## ԱՄՆ-ի Գործավարը Հաստատեց Իր Կառավարութեան Լիբանանի Կողմի Ըլլալը

Լիբանանի մօտ Միացեալ Նահանգներու նորանշանակ գործավար Էլիզապեթ Ռիչըրտ, վարչապետարան այցելեց եւ ընդունուեցաւ վարչապետ Թամունք Սալամի կողմէ, որուն հետ քննարկեց երկրորդային յարաբերութիւնները ամրապնդելու միջոցները, ինչպէս նաեւ շրջանային զարգացումներն ու հակամարտութիւնները լուծելու միջոցները: Ռիչըրտ ստեղծարար տեսակցութեան արջ խօսք ուղղեց լիբանանցիներուն ուր ըսաւ, թէ Լիբանան առանձին չէ, որովհետեւ Միացեալ Նահանգներ կը կանգնի անոր իշխանութիւններուն եւ ժողովուրդին կողքին, վտանգներուն դէմ դնելու եւ ապահովութիւնն ու կայունութիւնը վերահաստատելու: Այնուհետեւ Սալամ ընդունեց պաղեստինեան Ֆաթի Հարաթիի Կեդրոնական յանձնախումբի անդամ ԱզգաՄիմատը, որուն հետ քննարկեց քաղաքական, պաղեստինեան եւ խաղաղութեան բանակցութիւններու նորագոյն զարգացումները, ինչպէս նաեւ Լիբանանի պաղեստինցի գաղթականներուն օգնութիւններ տրամադրելու միջոցները:

## Լիբանանեան Բանակը Արտէի Բարձրագոյնը Զինակցելու Դիրքը Կը Հարուածէ

Լիբանանեան բանակը յայտնեց, թէ ծանր հրետանիով եւ հրթիռներով հարուածեց՝ Ռաս Պալպէքի եւ Արտէի բարձունքներուն վրայ ծայրայեղական զինեպետներու դիրքերը, նկատելով անոնց շարժումները: Ռաբակոմօնները մասնաւորաբար թիրախ դարձուցին Ռասի հէյլի եւ Կաթմէ Ետիկի շրջանները: Ըստ բանակի հաղորդած տեղեկութիւններուն, այդ հարուածներուն հետեանքով կործանած են զինեպետներու դիրքեր եւ անոնք մարդկային վնասներ կրած են: Այն Հըլուէ Գաղթականային Մէջ Զինեպ Բախում

Պաղեստինեան Այն Հըլուէ գաղթականին մէջ զինեպ քայլում տեղի ունեցաւ, որու հետեանքով պաղեստինցի մը սպանուեցաւ եւ երէտքայ մը վիրակտուցաւ: Գաղթականային պատասխանատուները անմիջապէս հաղորդակցութիւններ կատարեցին՝ վերջ տալու համար լարուած դրութեան եւ հետաքննութեան բանալու: Երեսփոխան Պահիյա Հարիրի Այն Հըլուէի զարգացումները քննարկեց պաղեստինեան եւ իսլամական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, վտանգաւոր համարելով գաղթականային մէջ տեղի ունեցած միջադէպերը: Տեղական պատասխանատուները նշեցին, որ կացութիւնը կայուն է՝ պաղեստինեան կազմակերպութիւններուն միջեւ համագործակցութեան շնորհիւ:

## Ասիի Ծէշտեց Լիբանանի Նախագահ Ընտրելու Կարելութիւնը

Լիբանանի մօտ Մեուտական Արաբիոյ դեսպան Ալի Աուտ Ասիի շեշտեց՝ Լիբանանի քաղաքական տագնապին վերջ տալու եւ նախագահ ընտրելու կարելութիւնը: Ան լիբանանցի պատասխանատուներուն յորդորեց երկրի շահեղ գերադասել ամեն բանէ վեր, միեւնոյն ատեն հետադարձել, թէ կարելի չէ անտեսել Մեուտական Արաբիոյ դէմ Հըզպալլայի դրսեւորած վերջին դիրքորոշումներն ու Լիբանանի նախագահի ընտրութիւնը խոչընդոտելը: Դեպքում այս կեցուածքները արտայայտեց, երբ խօսք կ'ուղղէր Մեուտական Արաբիոյ մէջ լիբանանցի ներդրողներու խորհուրդի կազմակերպած մեծարանցի հանդիսութեան ընթացքին:

### Երեւանի Մէջ Իրավիճակը Նոյնը Կը Մնայ

Երեւանի Երեւանի շրջանի Խորենացի փողոցի մէջ տեղի ունեցող՝ ոստիկանական զինեպ գրաւումէն աւելի քան 2 օրէն անց, իրավիճակը նոյնը կը մնայ եւ Սասնայ ծեղ կոչուող խումբի անդամները, ոստիկանութեան Պարեկային ծառայութեան գունդին մէջ պատակ կը պահեն քանի մը ոստիկաններ: Այս պահուն իրավիճակը հանդարտ է եւ ոստիկանական պատը, որ կազմուած էր նախօրէի երեկոյեան՝ հանուած է: Նախապէս ոստիկանութիւնը ուժեր կեդրոնացուցած էր Խորենացի փողոցին վրայ եւ փոխտեսուական պետներ Լեւոն Երանոսեանն ու Սամուէլ Յովհաննիսեանը կը համակարգէին ոստիկանական ուժերու շարժումները: Հայաստանի փոխտեսուական պետ Յունեն Պողոտեան յայտարարած է, որ բանակցութիւնները կը շարունակուին եւ «փոխգիշուներու երթալու տարբերակը պէտք է ըլլայ երկուստեք»: Խորենացի փողոցը տակաւին փակ է:

### Հայրենի Լուրեր

## Երեւանի Մէջ Սահմանափակ Ցոյց Եւ Բախում Տուցարարներու Եւ Ոստիկանութեան Միջեւ

«Ոչ թախանի» խախտմաներու հանդմնեւ գործիչներ, Երեւանի կեդրոնը կատարեցին բողոքի քայլարշաւ մը, ապա Նստացոյցի սկսան Մաշտոցի մօտ: Անոնք պահանջեցին ազատ արձաբակալուած քաղաքացիները: Համուտները, որ երթի մասնակիցները ազատ արձակուած են, ցուցարարները շարժեցան դէպի Ազատութեան հրապարակ: Աւելի ուշ մօտ հարիւր ցուցարարներ ուղղուեցան դէպի Խորենացի փողոց, ուր անոնք դէմ կանգնած էր ոստիկաններէ կազմուած շրջա: Ոստիկանութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ, կըզ ուղղելով գերծ մնալու արկածախնդրութենէ եւ երթեր չկազմակերպելու դէպի յատուկ պահպանող խօտի: Նշեց, թէ աւելի կանուխ Ազատութեան հրապարակին վրայ յայտարարութեան արդարութեան տիւն ցուցարարներու եւ ոստիկաններու միջեւ: Ոստիկանութիւնը ծերակալած էր շարք մը քաղաքացիներ: Քաջքուկը հնարաւոր եղած էր կանխել փոխտեսուական պետ Յունեն Պողոտեանի միջամտութեամբ, որ նաեւ խոստացած էր պատժել օրինախախտ ոստիկանները:

## Ազրայեանական Կողմը Կրկին Զինադարձ Խախտած Է

Ղարաբաղ-ազրայեանական համարտ զօրքերու շիման գիծին վրայ, զինադարձի պահպանման դրութիւնը հակառակորդին կողմէ խախտած է 20 անգամներ, որու ընթացքին տարբեր տրամաչափի հրածգային զինատեսակներէ՝ հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած են աւելի քան 240 կրակոցներ: Արցախի Պաշտպանութեան բանակի յառաջապահ գործակալները ձեռնարկեցին մտաքննարկ մարտական դիրքերու յուսալի պահպանութիւն:

### Միջազգային Լուրեր

## Աֆղանիստանի Պատանի Մը Գերմանիոյ Մէջ Գնացքի Ծամբողներ Կը Դաշուևահարէ



Գերմանիոյ մէջ գնացքի ճամբորդներու վրայ յարձակման պատասխանատուութիւնը ստանձնեց՝ Իսլամական պետութիւնը (Տաէշ) կազմակերպութիւնը յայտնելով, որ կացիտով եւ դանակով գնացքի ուղեւորներուն վրայ յարձակած աֆղանիստանցի 17-ամեայ փախստականը Տաէշի անդամ եղած է: Նախապէս հաղորդուած էր, որ խուզարկութեան ժամանակ ընկնէր զատանիին տան մէջ փաստաթուղթեր յայտնաբերած էին, որոնք կը վկայէին, թէ ան կապ ունի այդ ահաբեկչական կազմակերպութեան հետ, ինչպէս նաեւ ձեռքով նկարուած Տաէշի դրօշակը գտնուած էր հոն: Հայտնեց, որ գերմանական Վիւրցպոլկ քաղաքի մօտակայքը, երիտասարդ մը կացիտով եւ դանակով յարձակած էր գնացքի ճամբորդներուն վրայ, որուն հետեանքով անոնցմէ 20 հոգիներ վիրակտուած էին: Ըստ լրատուամիջոցներու հաղորդածին, յարձակողը յաջողած էր գնացքէն փախչիլ, սակայն ոստիկանները գայն հալածելով ի վերջոյ սպաննած էին: Այդ շրջանի ճամբորդական գնացքներու աշխատանքը ժամանակաւորապէս դադարեց, իսկ դանակահարուած որոշ ճամբորդներու վիճակը ծանր է կ'ընտրի ոստիկանական հաղորդութեան մէջ:

## Հիւսիսային Զորեա Պալիսթից Հրթիռներու Փորձարկում Կը Կատարէ

Հիւսիսային Զորեայի իշխանութիւնները միջազգային հանրութեան կըզ երկար անտեսելով, կրկին պալիսթից (հեռահար) հրթիռներու հերթական փորձարկում կատարած են: Հարաւային զորեայի բարձրաստիճան զինուորականներուն վկայութեամբ, 3 պալիսթից հրթիռներ փորձարկուած են, որոնք 500-600 ըլմ կտրած են: Ըստ մասնագետներու այսպիսի հեռահարութիւնը բաւարար է Հարաւային Զորեայի մէջ որեւէ կէտ հարուածելու: Կը կարծուի, որ այս քայլը:

Հիւսիսային Զորեա հակադարձած է՝ Հարաւային Զորեայի մէջ ամերիկեան THAAD հակահրթիռային համակարգերու տեղակայման:

Զորեական թերակղզիի վրայ իրավիճակը լարուած է, քանի որ Սեւ (Հարաւային Զորեայ) պարբերաբար գործարկութիւններ կը կատարէ Ռաշնկընի հետ, իսկ Փիոնկ Եանկ (Հիւսիսային Զորեա) անոր հակադրուելով կը յաւանի վիճակներու պետութիւն դառնալ:

Բացայ այդ ան լրատակարուած է նաեւ մերթոյի ուղեւորներուն հետ: Թերթը կը նշէ, որ միլիառատեր շէյխը եւ անոր որդին, Լոնտոնի մերթոյի մէջ երթեւեկած են ոչ թէ աւանդական արաբական զգեստով, այլ եւրոպական մարզական ձեռի հագուստներով:



# Կապոյտ Յիշատակներ Հրդեհուած Մելգոնեանէն «Մելգոնեանցի Ըլլալը Չի Բացատրուիր, Այլ՝ Կ'ապրուի» Դեպի Դասարան (թիւ 4)

## ՎԱՐԴԱՏ ԳՈՐԴՈՒՄԵՆ

Առաւօտեան ժամը 6-ին արթնցանք: Կիսամերկ տղաք լուացարանէն ննջարան կ'երթեւեկէին, ոմանք կ'ածիլուէին, ուրիշներ կը լուացուէին, ոմանք անկողինները կը շտկուէին: Նոյն ուրախ աղմուկը: Ննջարանին գիշերային հսկիչը՝ «Չանգակ Միսակ»ը եւ հերթապահը՝ Արամ Սարգիսեանը կ'երթեւեկէին: Տակաւին վարժուած չէի օտարներու առջեւ հանուիլ ու հագուիլ, այդ հեղեղին մէջ «Նաւարկել»:

Պատրաստուեցանք եւ իջանք վար:

Աղօթք: «Առաւօտ Լուսոյ, Արեգակն Արդար»: Կը զգաս, որ պայծառ եւ ապահով ապագայ մը քեզ կը սպասէ:

Նախաճաշ: Տաք թէյը, հալլում պանիրով, լոլիկով, վարունգով եւ ձիթապտուղով, համով իջաւ...:

Տակաւին դասերը չէին սկսած: Գացի դիւան: Պրն. Մեպուի Աբգարեանն էր դիւանապետը: Արձանագրութեան ձեւակերպութիւններէն ետք, Պրն. Աբգարեանը գիս դրկեց Տնօրէնին քով, դասարանս ճշդելու: Մտայ Պրն. Խաչեր Գալուստեանին գրասենեակը:

Նախակրթարանի 7-րդ դասարանն էի նախորդ տարին: Պրն. Գալուստեանը նայեցաւ վիճակացոյցիս, մուտքի քննութիւններու արդիւնքներէն եւ «տղաս քեզ 10-րդ դասարան պիտի դրկեմ» ըսաւ: Ըսի որ չեմ կրնար 10-րդ դասարան ըլլալ, «լաւ, 9-րդ դասարան եղիր» ըսաւ: Ինչորեքի որ առիթ տար ինծի 9-րդ դասարան երթալու եւ դասագիրքերուն նայելու:

Գացի 9-րդ դասարան:

Յարուբիւն Էտիկնիկեանը, Հրաչ Գոֆթիկեանը եւ Խաչիկ Ադամեանը, ի միջի այլոց, դասարանն էին: Հարցուցի 9-րդ դասարանի դասերուն մասին: Ամմիջապէս ըսին, որ շատ դժուար դասարան է եւ ես չէի կրնար այդ դասերուն հետեւիլ: «Հոս մենք Science կ'աւանդենք, Math կայ, Geometry կայ, History կայ, Geography կայ, English, Art, գրաբար, հայերէն, հայոց պատմութիւն, արաբերէն, յունարէն եւ ուրիշ շատ դասեր»: Աստուած իմ,

Նախակրթարանիս մէջ գիտութիւն առած էի բայց Science? թուաբանութիւն առած էի բայց Math? պատմութիւն, աշխարհագրութիւն առած էի բայց History? Geography? անգլերէն առած էի, բայց English? գծագրութիւն առած էի, բայց Art? այս գրաբարը ինչ է...:

Ամմիջապէս գացի Տնօրէնին քով եւ «ինծի 8-րդ դասարան դրեք» ըսի:

Եւ եղայ 8-րդ դասարանի աշակերտ (լաւ որ 8-րդ դասարան գացեր եմ, այլապէս Ալիսին կրնայի չհանդիպի...):

Եթովպիացի Հայկազ Երզնկացեանը գրեականի պատասխանատունն էր: Տետրակներս եւ գրեականի կարգ մը պիտոյքներս տալէ ետք ըսաւ, որ դասագիրքերը պիտի գործածէի Խաչիկ Արապաճեանին հետ (երկու հոգիի մէկ դասագիրք):

Խաչիկը (այժմ Լուս Անճելը, յայտնի լուսակարիչ), շատ ազնիւ եւ շատ բարի տղայ մըն էր (իմա ալ...), միակ թերութիւնը... չափազանցեալ շատախօսութիւնն էր: Միշտ բան մը ուներ ըսելիք, մնասանդ դասերու ժամանակ դասարանին մէջ եւ սերտորոյթեան պահերուն՝ սերտարանին մէջ: Անկէ դուրս՝ շատ չէր խօսեր... չէր ուզեր հանգիստը խանգարել:

Առաւօտեան Բ.Բ.Ը. Միութեան եւ Մելգոնեանի գոյգ քայլերգները երգելէ ետք դասարան կ'երթայինք: 15 վայրկեան յետոյ դասերը կը սկսէին:

Մելգոնեանի դասարանները շատ մեծ էին, մեծ պատուհաններով եւ երկու մեծ գրատախտակներով: Ամեն դասարանի մէջ հայ մտաւորականի մը նկարը կար:

Այդ լաւ օրերուն աղջիկներն ու մանչերը գատ դասարաններու մէջ դաս կ'ընէին, բացի արաբերէնի եւ յունարէնի դասերէն: Եւ արաբագոյն դասարանները՝ կարծեմ գիտութեան, ուսողութեան, մանկավարժական եւ առեւտրական դասերն: Երկսեռ՝ բայց՝ գատ-գատ:

Արաբերէնի պահերն առաջ, տղաքը անմիջապէս կը սանտրուէին, շապիկները կը շտկէին, ոմանք ժամանոց անուշաճուտներ կը դրուէին, կոշիկներուն փոշիները կ'առնէին եւ երբ աղջիկները

դասարան մտնէին... կեղծ անտարբերութիւն մը ցոյց կու տային: Անշուշտ դիտարեալ բարձր կը խօսէինք, որ մեր ներկայութիւնը զգացնէինք:

Աղջիկները նոյնպէս մակցէրու շէնքը չէկած, կը կրկուէին, կը շարունակէին քիչ մը եւ ճշտողելով դասարան կը մտնէին՝ գաղտագողի նայուածքներ նետելով աջ ու ձախ:

Պատանի ըլլալ՝ 13, 14, 15 տարեկան, արհիւր մէջը եռայ, ամբողջ օրը աղջիկ չտեսնես եւ գիտնաս, որ արաբերէնի պահը միակ առիթն է «վայելելու» աղջիկներուն ներկայութիւնը: Թե՛ ի՞նչ վայելելու, չէինք գիտեր տակաւին: Խեղճ Պրն. Չաթոյեան (արաբերէնի ուսուցիչը), մեզի արաբերէն պիտի սորվեցնէր, երբ մենք արդէն մեր երեւակայութեան թափ տուած, մէկական աղջիկ կարգադրած, ամպերուն մէջ կը լողայինք:

Արաբերէնի պահերը լաւագոյն առիթներն էին գիրքերու եւ տետրակներու մէջ գաղտնի, սիրային նամակներ փոխանակելու: «Մերս գաղտնի թող մնայ» երգը կարծեք հոն ծնունդ առած էր: Երբեմն փսփսուքներով կը խնդրէին մօտիկներէն, որ «բարեխօսես» եւ «գործ կարգադրես»: Ամբողջ եղածն ու ըլլալիքը՝ վերադարձող նամակը դրական ըլլար...:

Սիրային այդ նամակները, բացի «սեր» երգելէ, կը նպաստէին նաեւ մեր գրելու տաղանդները զարգացնելու: Թափ պէտք էր տայիր երեւակայութեանը՝ որպէսզի դիմացինիդ սիրտը գրաւէիր: Եւ որքան երկար գրէիր, այդքան շատ կը սիրէիր... որքան շատ սիրէիր, այնքան երկար կը գրէիր: Բանաստեղծութիւնները, բազմերանգ եւ բազմագոյն, բարձրաձայնք՝ բայց քնքուշ, բարդ՝ բայց պարզեցուած...: Ոմանք արհեստով սիրային նամակներ գրող էին եւ իրենց ընկերներուն համար տաքուկ ու յարմար նամակներ կը գրէին՝ որոշ վարձատրութեան մը դիմաց:

Եւ այդպէս, տարիներու ըմբացքին Մելգոնեանցի մակցէրն ու աղջիկները ճանչցան զիրար, եւ օր մըն ալ, ոմանք գոնէ հայկական տաքուկ բոյն մը շինելու եւ վարդագոյն երազներու իրականութիւնը ապրելու բախտին արժանացան:

Է~, պատանեկան անուշ եւ անմեղ սերեր:

# Փշրուն Էգիդան (Էկիտա)

## ԿՈՐԻՆ Լ. ԷՔԵՆԱՅԵԱՆ

**Ելելով կարծիքի ազատութեան սկզբունքի մեր յանձնառութենէն, տեղ կու տանք սոյն յօդուածին, առանց անպայմանօրէն կիսելու հոն արտայայտուող որոշ կարծիքներ:**

**«Խմբ.»**

Աշխարհի գերգոր ծաւալողապաշտ պետութեան՝ Խորհրդային Միութեան փլուզումը, վերջին քառորդ դարեայ քաղաքա-տնտեսական ցնցումները, նոր ուժանիւթի տիրացման մարտադրաւը, համացանցային հաղորդակցման ու աշխարհայնացման քաղաքականութեան ողողումը, ոչ միայն նոր եղելութեան ու աշխարհաընկալման առջեւ դրաւ մուրօրակի մարդկութեան, ինչպէս նաեւ հայոց մտաբանակող տնտեսագետները, այլեւ քանդեց քաղաքական աշխարհի երեւակայական էկիտան:

Իսկ ի՞նչ տեղի ունեցաւ հայ քաղաքական աշխարհէն ներս, 20-րդ դարու երկրորդ տասնամեակէն եւ մասնաւորաբար՝ երկրորդ աշխարհամարտէն ետք: Մին՝ իշխանութիւնը կորսնցուցած, թշնամական դիրք բռնեց խորհրդային ծաւալողական գաղափարախօսութեան դէմ, գեթ իր տեսակը պահպանելու եւ սխալներն անթեղելու ի խնդիր: Միւսը՝ նոյն մարմնաշրջվ յանկարծ կոչուեցաւ յառաջդիմական ճակատ... իսկ կարեւորագոյնը՝ խորհրդայնացած հայ մարդը, Հայրենիքը (Հայաստանը) «կործանուեց» փրկելու համար, Քերչէն մինչեւ Մերծպալութեան երկիրներ արեամբ ողողեց Խորհրդային Մեծ Հայրենիքի օրինեալ հողը (տալով աւելի քան 350 հազար գոհեր): Եւ յանկարծ յայտնուեցաւ Ռայխի պատերուն տակ «երեւակայելով», որ ինք Արարատ լեռան լանջերն է որ կը դողդաջնէ:

Այսպէս, երբ մուրակի բանական ընտրանին մտաւորապէս 2350 տարուայ քաղաքական փիլիսոփայութեան պարբերական եւ օրինաչափ զարգացման ներդրում տուած էր՝ Արիստոտելէն մինչեւ հզօր Պարթեզիկ Նժդեհ, մենք նախընտրեցինք հիասթափութեան հասցնող

մեր թերատի քաղաքական գործիչներու մեծամեծ յորջորջումները լսել, փոխան տրամաբանական, գործնական, նպատակաւոր ու իրականանալի համազգային տեսլականի բիրտղացման ու անոր բազմաբնոյթ տարբերակներով եւ միջոցներով իրականացման:

Իսկ Խորհրդային Միութեան փլուզման տարիներուն (1985-1991) եւ անկէ ետք՝ երկրաշարժի գեղեցիկներուն երկունքին, Ղ դարաբաղեան արհմաքաւ սըրբազան պատերազմի ընտրանի կորուստներուն եւ յաղթանակին, մուլօ ու ցուրտ կեղեքիչ տարիներուն գուզնթաց, նախկին Զա ԿԷ ՊԷ-ի պատեհապաշտ մնացորդայ տարբերու առաջնորդութեամբ, տունկի պէս ծնունդ առին քաղաքական կազմակերպութիւններ եւ կուսակցութիւններ՝ կողոպտելու, իւրացնելու, յուսալքելու Սփիւռքի կիւթական եւ հոգեւոր աշխարհը ու իր անբաղանջ «աւարտին» հասցնելու հայրենի ժողովուրդին ազատութեան, անկախութեան եւ պետութիւն կերտելու բաղձանքը...:

Այդ նոյն պատեհապաշտ փաղակզը քառորդ դար շարունակ ինծեք ԱՄՆԿԱՅԻ ՍՐԲԱԶԱՆ ՈՐԴԻՆԵՐՈՒՄ մարդավայել եւ հայրավայել ապրելու իրաւունքը, մինչեւ... մինչեւ, որ փամփուշտի տաքութիւնը եկաւ սկիզբ տալու նոր տրամաբանութեան...:

Ի՞նչ է, պէտք էր սպասելք, որ փամփուշտի տաքութեամբ որոշուեր, որ ՀԱՅՈՒՄ արին կը թափի..., որ ՀԱՅՈՒՄ կորուստ կ'արձանագրես...:

Ի՞նչ է, պէտք էր ԱՇՈՒՄԱԳՈՅՆ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՄ արարքը անաբեկչութիւն պիտակուեր եւ ան ալ ցեղապան առաջնորդներու եւ Մովսէս Գորգիզեաններու, Սոնթէ Մեքսիկեաններու, Արամ Գրիգորեաններու եւ հարիւրաւոր այլ հայորդիներու դաժնեղներու երախնեւորով..., որպէսզի անդրադառնայինք, որ մենք ՀԱՅՈՒՄ ենք...:

Սթափեցէ՛ք ԱՇՈՒՄԱԳՈՅՆ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՄ, որպէսզի ԿԵԱԼԵԻՒԵՂՈՒՄ կազմակերպուածօրէն ու հաւատարմիւրդ ընթանաք դէպի մեր կերտելիք ապագան...:

Լիբանանի «Ճիւղիշեան Յիշատակի Ձեռնարկ»

**Հաստատութեան  
50-ամեակի Հանդիսութիւն**

Ուրբաթ, 22 Յուլիս 2016-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային Առաջնորդարանի «Երջ» Մամուլեան-Եռագոյն» հանդիսարանին մէջ, Պորժ Համալս:

<Դաւիթ

Pour vos lunettes progressives

# BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh  
Tel.: (01) 870016 - (03) 194688

քան դիւրին գործ չէ՝ որչափ մարդիկ ընդհանրապէս կը կարծեն: Դիւրին է խօսքով ըսել, թէ մարդ գոհելու է իր դրամը եւ ժամանակը, սակայն այնքան ծանր աշխատանքով եւ գոհողութիւններով ձեռք բերուած բարիքները, ուրիշներուն ծառայեցնելու համար մեծ սեր ունենալ պէտք է՝ թշուառին կամ կարօտեալին հանդէպ, սերն է, որ կարելի կ'ընէ տալը, գոհելը եւ գոհուիլը, եւ այս է ճշմարտապէս արժեքաւորը:

\*\*\*

**Ճշմարտապէս Արժեքաւորը**  
Առհասարակ արժեքաւոր կը համարենք այն մարդիկը, որ հանճար ունին, ուսումի սեր են կամ հասուն են: Եւ սակայն ճշմարտապէս արժեքաւորը այն մարդն է, որ իր տաղանդը, ուսումը կամ դրամը կը գոհե՛ հասարակաց բարիքի համար: Մարդկութեան ծառայելը այն-

\*\*\*

**Գիրքը Միտքը Կը Լուսաւորէ**  
Գրականութիւնը անտեսանելի խողովակ մըն է, որուն խորհուրդի եւ ճշմարտութեան հոսանքները կը թափին՝ մարդոց իմացական ու բարոյական արտերուն վրայ եւ գանտը կ'արգասաւորեն:

Երկու փայտի կտորներ երբ մէկմէկու շփես՝ լոյս ու տաքութիւն կ'արտադրուի, նոյնպէս ալ երբ գիրք մը կը կարդաս ուշի ուշով՝ միտքը հեղինակին միտքին կը շփուի, հոգիդ անոր հոգիին կը հպի եւ այս շփումէն ու հպումէն գաղափարի լոյսը յառաջ կու գայ ու միտքը կը լուսաւորուի:

## Սլացիկ Մտածումներ Իմաստունի Պատուերը

### ՕՅԱՆ ՊՈՏՐՈՒՄԵՆՆ «Չարթօթք»ի Երեք Աշխատակից

Պարսիկ իմաստուն մը, անխորհուրդ խօսքերէ գգուչութեան արժեքը ցոյց տալու համար, ըսած է՝ «Աւելի լաւ է խորհիլ, թէ ի՞նչ պիտի ըսես, քան զղջալ, թէ ինչու՞ ըսի»: Այս պատուերը այնքան կը յարմարի մեր իրականութեան, որ կարծեք, թէ յատկապէս մեզի համար ըսուած ըլլար: Անկեղծ ու աննախապաշար ոգիով եւ միտքով անդրադառնանք՝ վերջին աւելի քան յիսուն տարիներու անցուդարձերուն, որքան արտայայտութիւններ ու իրատարակութիւններ կը գտնենք, որոնք համար այժմ զոյգալու եւ խղճահարելու հազար պատճառներ ունինք: Անոնց նպատակը եղած է ազգը արթնցնել ու ոգեւորել, իսկ շարժառիթը՝ առհասարակ հայրենասիրութիւն, քաջութիւն, ազատական խոյանքներ ցու-

ցադրել եւ ժողովրդականութիւն շահիլ: Հետեւանքները սակայն՝ գրեթէ միշտ բաղձացուածին հակառակ եղած են եւ դժբախտութիւններով ու աղէտներով ծանրացած են ժողովուրդին վրայ:


Այսօր կ'ըսենք, թէ իրողութեանց խելամուտ ու այլեւս փորձառու եղած ենք: Բայց եթէ մեր շուրջը նայինք կը տեսնենք, որ դարձեալ բանիւ եւ գոչով այնպիսի արտայայտութիւններ կ'ըլլան մեր մէջ, որոնցմէ հայութեան համար դոյզն շահ կարելի չէ սպասել՝ առողջ միտքով, իսկ վնաս ու կորուստ միշտ հաւանական է: Արդարեւ այդ բոլորը ներքին սպառնալից համար կ'ըլլան մեծ մասամբ, սովորական չքմեղանքն ալ սա է, թէ կը կարծուի, որ մեր շրջանակէն դուրս չեն ելլեր, օտարներու ակնքն չեն հասնիր: Մինչդէռ կ'արժէր, որ ցարդ սորված ըլլայինք, թէ մեր բերնէն ու գրիչէն ելած խօսքերուն տերը այլեւս մենք չենք, թէ անոնց

հետեւողներ կրնան գտնուիլ ու հասցնել այն տեղերը, ուր մենք չենք ուզեր: Աւելցնենք, որ շատեր խօսքով ալ չեն գոհանար, գործնական քայլերու իսկ կը դիմեն, եւ ինչպէս անցեալին պատահած է, միջամուխ կ'ըլլան այնպիսի խնդիրներու, որոնք իրենց հասողութենէն ու ձեռնահասութենէն դուրս կը գտնուին:

Չգոյշ ըլլանք, այնպէս խօսինք, գրենք ու գործենք, որ ետքը չզղջանք:

\*\*\*

**Ճշմարտապէս Արժեքաւորը**  
Առհասարակ արժեքաւոր կը համարենք այն մարդիկը, որ հանճար ունին, ուսումի սեր են կամ հասուն են: Եւ սակայն ճշմարտապէս արժեքաւորը այն մարդն է, որ իր տաղանդը, ուսումը կամ դրամը կը գոհե՛ հասարակաց բարիքի համար: Մարդկութեան ծառայելը այն-



### Պատմութեան Մէջ Այսօր

### Միևսա

Մեր թուականէն 88 տարիներ առաջ՝ 20 Յուլիս 1928-ին ծնած է Միևսա, նշանաւոր գեղանկարիչ, 20-րդ դարու երկրորդ կէտի հայ կերպարուեստի ամենակարկառուն ներկայացուցիչներէն մէկը:

Բուն անունով Միևսա Կարապետ Աւետիսեան, ան ծնած է (Ճաճուր) գիւղը (այժմ Հայաստանի Շիրակի մարզ): Համեմատաբար ուշ գեղանկարչութեան ասպարէզ մտած է: Պատանի հասակին հետաքրքրուած է Մարտիրոս Սարգսի արուեստով: Անոր գեղարուեստական եւ գեղագիտական զարգացման մէջ մեծ ազդեցութիւն ունեցած են՝ Հայկական մանրանկարչութիւնը եւ իտալական վերածնունդի նկարչութիւնը, որու ծանօթացած է Լենինկրատի մէջ ուսանած տարիներուն:

Միևսա ստեղծած է հայկական գիւղաշխարհը արտացոլող համադրանկարներ, բնանկարներ, ինչպէս նաեւ դիմանը-

կարներ, նախըմբորթեր եւ որմանկարներ: Անոր ստեղծագործութիւնները իւրայատուկ են իրենց գոյնային ուժեղ հակադրութիւններով, որոնք կ'արտայայտեն լուսաւոր եւ քնարական տրամադրութիւններ, երբեմն ողբերգական շեշտերով: Ան անդրադարձած է նկարչութեան բոլոր ոլորտներուն՝ գեղանկարչութիւն, գծանկարչութիւն, որմանկարչութիւն, բեմանկարչութիւն ետալլել:

Միևսաի նկարները յայտնի են իրենց գոյնային կտրուկ հակադրութիւններով: Իր յայտնի նկարներէն մի քանին կը վերաբերին հայ ժողովուրդի անցեալին՝ յատկապէս 1915-ի Հայոց Ցեղասպանու-

թեան, որոնցմէ մագապուրծ եղած են իր ծնողը: Այդ թեմային կը պատկանին 1965-67-ին ստեղծուած «Ճանապարհ. ծնողներու յիշողութիւնները» եւ «Տեր-Չօրի ճանապարհին» (1964) կտավները: Միևսաի գիտակից ստեղծագործական կեանքը տեսած է 15 տարիներ՝ 1960-մ. 1975, որու ընթացքին նկարիչը ստեղծած է մտաւորապէս հինգ հարիւր մեծ ու փոքր կտավներ, նոյնքան գծանկարներ, քան մեծածաւալ որմանկարներ, մէկ տասնեակէ աւելի պալէի ու թատերական բեմականացման ձեւաւորումներ:

Միևսա մահացած է Երեւան 23 Փետրուար 1975-ին, ինքնաշարժի արկածով:



# Մշակութային Արձագանգ

## Հայկական Բացօթեայ Փառատոն Լոնտոնի Մեջ

17 Յուլիսին Լոնտոնի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցած է հայկական բացօթեայ փառատոն: Մշակութային տարբեր ուղղութիւններ ընդգրկող այս ծէնարկը՝ համահայկական ամենամեծ իրադարձութիւնն է Միացեալ Թագաւորութեան մէջ, որուն մասնակցելու համար կը ժամանեն հայեր երկիրի տարբեր վայրերէ: Այս մասին կը յայտնէ «Առաւօտ»ը:

Փառատոնը, ՀՀ դեսպանատան հիւպատոսական հարցերով կցորդ Հայրափի Տրմբեյեանը եւ ուրիշներ:

Փառատոնը կ'իրականանայ Հայ Առաքելական եկեղեցւոյ Մեծ Բրիտանիոյ եւ Իրլանտայի թեմի Նախագահութեամբ ու տեղւոյն հայ համայնքի ջանքերով եւ մասնակցութեամբ:

«Մեր գլխաւոր նպատակն է բրիտանահայ համայնքին նոյնիսկ մէկ օրով երկիրի տարբեր ծայրերէն հաւաքել ու համախմբել իրենց ինքնութեան մեր մշակոյթի, պատմութեան շուրջ: Ինծի համար շատ կարեւոր է յատկապէս երիտասարդներու ներգրաւուածութիւնը այս ամէնուն մէջ: Այս տարին մեզի համար առանձնայատուկ է, քանի որ կը նշենք Հայաստանի անկախութեան 25-ամեակը», ըսած է Առաքելական եկեղեցւոյ



Մեծ Բրիտանիոյ եւ Իրլանտայի թեմի առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոս Մսուկեան:

Փառատոնի ընթացքին ելոյթ ունեցած են հանրաժանութեան ջոշապահար Լեւոն Չիլիսկիւրեանը, «Կոմիտաս» երգչախումբը, «Ալթամար» ժողովրդական պարախումբը եւ ուրիշներ: Այս տարուան ծրագրին յատուկ հիւրերն էին Հայաստանէն տուուկահար Պերոգ Կարապետեանը եւ երգչուհի Իվեթա Մուկուչեանը:

## «Մշակոյթի Արուեստանոց» Խորագիրով Ձեռնարկ Վալանսի Մեջ

Վալանսի Հայ մշակոյթի տունը ամէն տարի Յուլիսամսուան արձակուրդներու ժամանակ, մշակոյթի տան 6-11 տարեկան երեխաներուն համար կը կազմակերպէ «Մշակոյթի արուեստանոց» ձեռնարկը, որ մեծ համբաւ ունի երեխաներուն մօտ, որոնք մեծ սիրով եւ ոգւերուծեամբ կը մասնակցին անոր: Այս տարի եւս բացառութիւն չէ:

Ծինպաշեան իր խումբին հետ միասին, հիմք ընդունելով նախկին տարիներու փորձը, երկու ամիս Նախապատրաստուած է, որպէսզի երեխաներուն հնարաւորութիւն ընձեռուի սովորելու հայերէն լեզուն եւ հայ մշակոյթը:



Պատրաստուած է նախապատրաստուած, հայերէնի դասեր, սկարչութիւն, հայկական գեղարուեստ, երգեցողութիւն, խաղեր եւ այլն:

Տրագիրին մէջ ներառուած են՝ Ուսուցողական համագումարներ, ընդհանուր ձեռնարկներ, հայկական ճաշատեսակներու պատրաստում, հայերէնի

«Հայերն Այսօր»-ի փոխանցումը՝ Հայ մշակոյթի տան նախագահ Ալէն (Լազո)

## Սուրիահայ Օրագիր

### Հալէպի Մէջ Բացոււմը Կատարուեցաւ Սուրիոյ Առաջին Հայկական Ռատիոյին

Կիրակի՝ 17 Յուլիս 2016-ին, հալէպահայութիւնը մեծ ցնծութիւն մը պարտեցաւ՝ Ներկայ գտնուելով Սուրիոյ հայկական առաջին ռատիոկայանի, 2011 թուականէն ի վեր գործող եւ իր ծայրը համայն աշխարհին հասցնող, «Ռատիո Երագ»-ի կեդրոնի բացման հանդիսաւոր արարողութեան, կը հաղորդէ «Գանձասար»-ը:



որ «Ռատիո Երագ»-ին ծայրը անխափան մնայ:

Բացման հանդիսաւոր արարողութեան ետք, Ներկայտեղ ուղղուեցան Լ. Շանթ սրահ, ուր Ներկայացուեցաւ յատուկ յայտագիր:

Օրուան հանդիսավար Յուլիս Դաւարեան ըսաւ թէ: «5 տարիներ առաջ երբ հիմը կը դրուէր «Ռատիո Երագ»-ին ոչ մէկը կրնար պատկերացնել, թէ մեր կեանքը ինչպիսի հողովոյ՞ք պիտի ունենայի: Հիշուի՞ք մէջ: Ճափնակներն ունեցնող մը կ'ըսէ: «Հետաքրքրական օրեր պահիս»: Այսպիսի հետաքրքրական ու պատերազմական ծանր օրեր պարտեցանք անցնող հինգ տարիներուն, բայց որովհետեւ «Ռատիո Երագ»-ը կը գտնուի Հալէպի մէջ, քաղաք մը, որ անձեզը շողորմեց վերածելու կարողութիւն ունի, որովհետեւ մենք ունինք ձեզի պէս աշակերտներ եւ քաջաւերոյներ, այդ հետաքրքրական տարիները վերածուեցան ըրական գործօտի՝ Նորանոր հորիզոններ նուաճելու: Այդ հորիզոններուն վրայ էր այս կեդրոնի բացման ծրագիրը, որ միասնաբար վայելեցինք»: Ապա իրաւորներ ներկայանան, յայտագրի ամսական քանակները եւ ծանօթանալու անոր բաժնիներուն:

Այնուհետեւ խօսք առաւ «Ռատիո Երագ»-ի պատասխանատու տոբթ. Ռուբէն Գեորգեան, որ ըսաւ. «Ռատիոյի գաղափարը Հալէպի համար անհրաժեշտ էր, մենք ճիշդ է որ չունէինք մեր սեփական ռատիոն, բայց 80-ականներուն մեծ հաճոյքով կ'ունկողներէր երեսանի Ձայնը, ապա նաեւ Կիւրոսի հայկական թղթակցութիւնը, ինչպէս նաեւ ծովագերեայ շրջաններու մէջ դիւրաւ ունկողներէն իրականացան հայկական ռատիոներու հարցը: Այնուամենայնիւ զանազան առիթներով մենք աշխատանք տարած ենք ունենալու ռատիոն, սակայն դժուարութիւններ յառաջացած են եւ չենք յաջողած, վերջերս համապատասխան ընձեռնած առիթներէն օգտուելով՝ 2011-ին

սկսանք «Ռատիո Երագ»-ի սփռումը, որուն աշխատանքները հետզհետէ կ'զարգանային: Եւ մենք ունեցանք նաեւ յատուկ ռատիոկայան-կեդրոն մը»: Ապա նշեց, թէ ձայնասփիւռ ունենալը ինքնանպատակ չէ: Մեր նպատակն է ժողովուրդի գաւաակներուն հասանելի դարձնել հայկական ձայնը, խօսքը, միտքը, երգը, արուեստը եւ կը կարծենք, որ ձայնասփիւռը իր տեսակին մէջ այս քաղաքում կ'ընդհանրուի մը: «Ռատիո Երագ»-ը իր կարգապահութեամբ յարձնուի «Երագ իմ երկիր հայրենի»ն եւ մենք որոշեցինք սուրիահայութեան ձայնը լսելի դարձնել հայկական աշխարհին, հասնար մօտիկութիւն ցուցաբերելու բոլոր կողմերուն հետ, փոխարէնը դրական համագործակցութիւն տեսանք, որ ջանաւորի համազօր պարզեւ է մեզ համար: Աշխատանքով կամաւոր աշխատանքով սկսաւ ու ծրագրուած ձեւով, համերաշխութեամբ շարունակեց իր ծրագիրը՝ միշտ ձգտելով իր առաւելագոյնը ի գործ գնել: Ներկայիս աշխատակազմը ունի 20 նոր ծրագիրներ: Հետեւեցե՞նք նախորդին տեղի մը նորութիւնները»: Տոբթ. Գեորգեան հաստատեց, որ «թեւ ռատիոն այժմ համացանցի հնարաւորութիւններով կը գործէ, սակայն մենք պետական համապատասխան կողմերուն դիմում ներկայացուցած ենք, որ ռատիոն սփռուի նաեւ FM ալիքով ամբողջ Սուրիոյ տարածքին եւ աշխատանքը ընթացքի մէջ է»:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ տեսաերկ մը, ուր կը ներկայացուէր «Ռատիո Երագ»-ի հիմնադրութեան տարիները, իրականացուող աշխատանքները, անձնակազմը, ծրագիրներն ու կեդրոնի կառուցման հանգրուանները:

Հուսկ տեղի ունեցաւ կարկանդակի հատումը: Շնորհաւորանքներու ջերմ մթնոլորտի մէջ Ներկայտեղ շրջեցան նոր կեդրոնէն ներս եւ ծանօթացան «Ռատիո Երագ»-ի նորակառոյց կեդրոնին:

«Ռատիո Երագ»-ի կեդրոնի բացման հանդիսութեան ներկայ էին՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշէն Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան ժիրայր Ռեիսեան, ՀՀ Հալէպի գլխաւոր Հիւպատոսութեան կցորդ Միսաք Բալայեան, Պատկան Մարմինի, հալէպահայ կազմակերպութիւններու, Ազգ. Իշխանութեան, միութիւններու ներկայացուցիչներ, Հայ Կաթողիկէ Յամայնքի ներկայացուցիչ Տեր Կոմիտաս Բիւն, Տատաղեան, հոգեւոր հայրեր, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ իրաւիքեալներ:

Կեդրոնի պաշտօնական բացումը կատարեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանն ու Պատկան մարմինի ներկայացուցիչ Կարօ Իզապաշեանը: Ապա Սրբազան Հայրը կատարեց քրօնիւնքի եւ կեդրոնի օրհնութեան արօթք եւ այս առիթով ողջունեց մեր ժողովուրդի գաւաակները աշխարհով մեկ՝ Նշելով, որ այս ճամբով համայն աշխարհին պիտի սփռենք մեր ապրումները, մեր յոյսը, մեր նուաճումներն ու դժուարութիւնները: Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակտեց «Ռատիո Երագ»-ի կեդրոնի բացումն ու յաջողութիւն մաղթեց այս աշխատանքը իրականացնող բոլոր նուիրեալներուն:

Ապա խօսք առաւ Պատկան մարմինի ներկայացուցիչ Կարօ Իզապաշեան: Ան ըսաւ. «Եթէ «Ռատիո Երագ»-ը անցնալին երագ էր, ապա այսօր իրականութիւն է: Ծիշող է, որ հինգ տարիներէ ի վեր կը գործէ, սակայն այսօր ունենալով իր կեդրոնը անելի կազմակերպուած պիտի աշխատի՝ հալէպահայութեան ձայնը եւ յուզումները փոխանցելով համայն հայութեան: Եթէ ռատիոն այսօր պատերազմի թեմայով մեր դժուարութիւններն ու տագնապները պիտի փոխանցէ, ապա ապագային ան պիտի փոխանցէ սուրիահայութեան նոր ծրագիրներն ու վերահասունցման աշխատանքները»: Իր խօսքի ամառապետ Իզապաշեան մաղթեց,

## Հայկական Ընտանիքի Իրայատկութիւն

### Հայկական Գեղեցիկ Ընտանիք Մը Սթեֆանօ Կապանայի Instagram-ին Մէջ



Երէկ առաւօտեան Instagram-ի մէջ իրապարակուած լուսանկարները նայելու ընթացքին, իտալացի հանրայայտ ձեւաւորող, Dolce & Gabbana աշխարհահռչակ Նորաձեւութեան տան համահիմնադիր Սթեֆանօ Կապանայի էջին վրայ, գեղեցիկ ու այնչափ հաճելի լուսանկար մը գրաւեց ուշադրութիւնս: Անելի երկար գնէնէ յետոյ հասկցայ, որ նկարին մէջ պատկերուած ընտանիքը հայկական է (հաւանաբար այդ էր պատճառը, որ այդքան լաւ ուսումնասիրեցի զայն): Լուսանկարին մէջ հայուհի Սոնա Սարգսեանի գեղեցիկ ու ներդաշնակ ընտանիքն է, որ կը մասնակցի Dolce & Gabbana-ի իւրօրինակ լուսանկարներու նախագիծին: Այս մասին կը հաղորդէ NEWS.am STYLE-ը:

Նախագիծին նպատակն է հանրայայտ ապրանքանիշի կայքին վրայ ստեղծել ընտանեկան լուսանկարներու պատկեր, որ ներառուած կ'ըլլան աշխարհի տարբեր անկիւններ ապրող ընտանիքներու գեղեցիկ լուսանկարները: Անոնանքը պարտադիր չէ, որ ցուցադրեն այս ապրանքանիշի հագուստները, սակայն ընտանիքի եւ սերունդներու թեման պէտք է պահպանուած ըլլայ: Յատուկ այս նախագիծին համար ստեղծուած է #DGFfamily հեշթեյքը, որմով կարելի է գտնել հազարաւոր գեղեցիկ լուսանկարներ: Սակայն անոնցմէ ընդամենը երկուքը (այս պահու դրութեամբ), գրաւած են Սթեֆանօ Կապանայի ուշադրութիւնը, հետեւաբար յայտնուած են անոր Instagram-ին մէջ:

## Սփիւռքահայ Կեանք

### Ֆրանսա

### Նիսի Հայկական Եկեղեցւոյ Մէջ Պատարագ Մատուցուած է Ի Յիշատակ Ահաբեկութեան Չոհերուն



Ֆրանսայի Նիս քաղաքի Սուրբ Փիլիպոս հայկական եկեղեցւոյ մէջ, հանդիսաւորութեամբ Հայ առաքելական եկեղեցւոյ Ֆրանսայի թեմի առաջնորդ Վահան արքեպիսկոպոս Յովհաննիսեանի, պատարագ մատուցուած է ի յիշատակ Յուլիս 14-ին Նիսի մէջ տեղի ունեցած ահաբեկութեան զոհերուն:

Ինչպէս կը հաղորդէ «Արմենփրես»-ը վկայակոչելով Nouvelles d'Arménie-ն, պատարագին մասնակցած են նաեւ Երուսաղէմի սուրբ Ղազարի միաբանութեան գլխաւոր քարտուղար Ֆիլիպ Պիկապետրան, Սուրբ Փիլիպոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հայր Գրիգոր Խաչատրեանը, Լոնտոնի սուրբ Մեսրոպ հայկական եկեղեցւոյ հովիւ հայր Շնորհ Պաղտասարեանը, տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ եւ այլք:

Պատարագին մասնակցած է նաեւ ահաբեկութեան ընթացքին վիրաւորուած 10-ամեայ տղայ մը, որ եկեղեցւոյ երգչախումբին անդամ է: Պատարագէնտեղհատագեալները արքեպիսկոպոս Յովհաննիսեանի գլխա-

լորութեամբ շարժած են Փրոմէնատ տեղ Անգլեզ (Անգլիական ճեմարդի), ուր տեղի ունեցած է ահաբեկութիւնը եւ աղօթած զոհուածներու հոգիներուն համար: «Մենք եկած ենք յարգանքի տուրք մատուցելու զոհերուն եւ վկայելու մեր համերաշխութեան ու սրտակցութեան մասին, կիսելու Նիսի բնակիչներուն ցաւը: Յիշելը հաւատքի եւ դիմադրութեան քայլ է, քանզի ստով կը պահպանենք կեանքի նկատմամբ յոյսը», դիմելով հաւաքուածներուն ըսած է Վահան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը:

Ֆրանսայի Միջերկրական ծովափի Նիս քաղաքին մէջ, Յուլիս 14-ի երեկոյան տեղի ունեցած ահաբեկութեան հետեւանքով՝ զոհուած էին 84 մարդիկ եւ հարիւր ուրիշներ վիրաւորուած: Ֆրանսայի Ազգային օտօկ առիթով բեռնատարը ըջելով՝ ահաբեկիչը միւրճուած երգալիք կեդրոնական հատուածներէն մեկուն մէջ հաւաքուած ամբիսին մէջ, ապա կրակ բացած մարդոց ուղղութեամբ: Վարորդը սպաննուած էր ոստիկաններուն կողմէ:





# Մարզական



## Պրագիլի Ախոյեանութիւն

### Փալմէյրաս Միանձնեայ Առաջատար



Պրագիլի ֆուտպոլի ախոյեանութեան 15-րդ հանգրուանին, առաջատար «Փալմէյրաս»-ը իր դաշտէն դուրս յաղթեց գորաւոր «Ինթերնասիոնալ»-ին եւ ամրապնդեց առաջատարի դիրքը: Երկրորդ դիրքը գրաւող «Քորինթիոն»-ը հաւասարեցաւ, իսկ երրորդ դիրքը գրաւող «Կրեմիո»-ն պարտուեցաւ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ինթերնասիոնալ - Փալմէյրաս 0-1, կոլ. Էրիք 11, փոխ. Կ. Խեսուս,
- Քորինթիոն - Սաօ Փաուլօ 1-1

- կոլեր. Պրուսո Էրիքե 22 - Ք. Զուելա տուգ. 15,
- Սփորթ Ռեսիֆէ - Կրեմիո 4-2, կոլեր. Սերժինիօ 22, Տ. Սուլազ 39, տուգ. 75, Էսմիլսըն 68 - Փետրօ Ժերոմէ 45, 63,
- Սանթոս - Փոնթե Փրեթա 3-1, - Աթլէթիքօ Փարանսես - Վիթորիա 1-1
- Պոթաֆոլօ - Ֆլամենկօ 3-3, - Ֆլումինսես - Բուրզերօ 2-0

- Դասաւորում.
- 1-Փալմէյրաս 32 կետ կոլեր 31-14, 2-Քորինթիոն 29 կետ 25-11, 3-Կրեմիօ 27 կետ 25-19,
- Ռեքորդներ. 1-Կարիբէ Խեսուս (Փալմէյրաս) 10 կոլ, 2-Կրաֆիք (Սանթա Բրուզ) 8 կոլ, 3-Տիեյօ Սուլազ (Սփորթ Ռեսիֆէ) 8 կոլ.

## ԱՄՆ-ի Ախոյեանութիւն

### Ռեալ Սոլթ Էյթ Զուասարեցաւ

ԱՄՆ-ի ֆուտպոլի ախոյեանութեան՝ Մեյճոր Լիկ Սաքքըրի 20-րդ հանգրուանին, Եուրօ Սոլթսթանի մաս կազմած «Ռեալ Սոլթ Էյթ»-ը իր դաշտին վրայ առանց կոլերու հաւասարեցաւ «Նիու Ինկլենտ» խումբին հետ: Զայազգի մարզիկը փոխարինուեցաւ 77-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Վանքուվըր Ռայթթեմ - Օրլանտօ Սիթի 2-2
- Տալաս - Շիքսօ Ֆայր 3-1, - Էլ Էլ Կալաբրի - Յիւսթոն Տայթն 1-0
- Քոլորադօ Ռեյժիօ - Սփորթինկ Քանզաս Սիթի 1-0
- Փորթլենտ Թիմպերզ - Սիեթլ Սաունտըրզ 3-1
- Մոնրէալ Իմփէթթ - Նիու Եորք Սիթի 1-3
- կոլեր. Գ. Շիփ 55 - Տալաս Վիյա 35, Դ. Յերիսըն 45+2, Ֆ. Լամփարտ 85, Արեմտեան շրջանի դասաւորում.
- 1-Տալաս 40 կետ կոլեր 34-30, 2-Քոլորադօ Ռեյժիօ 37 կետ 22-13, 3-Կալաբրի 32 կետ 32-18, 4-Ռեալ Սոլթ Էյթ 30 կետ 29-30

## Այսօրուան Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

### ԶԵՏՓԻՆԵՆ ԼԻԿԻ Բ. ԱՆԱՄԱՊԱՏՐ. ԶԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ

- Ժամը 17:00 Ասթանա (Ղազ.) - Ժալկիիի (Լիթ.) երթ. 0-0
- Ժամը 20:15 Նորքէօփիկ (Շուէտ) - Ռոզնայրիկ (Նորվ.) երթ. 1-3
- Ժամը 20:30 Ֆերենցվարոշ (Հունգ.) - Փարթիզան (Ալպ.) երթ. 1-1
- Ժամը 21:15 Թրենշին (Սլովաք.) - Օլիմպիկա (Սլովեն.) երթ. 4-3
- Ժամը 21:45 Սելթիք (Սկոտլ.) - Լինքոլն Ռեյն Իմփս (Ըիպր.) երթ. 0-1
- Ժամը 21:45 Տիւսանօ Զակրէպ (Խորուաթ.) - Վարտար (Մակեդ.) երթ. 2-1
- Ժամը 22:15 Էֆ Էյի (Իսլ.) - Տանտը (Իրլանտա) երթ. 1-1

### ԶՈՒՄ ԼԻԿՏԵՐԱՏՈՐԵՍԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԶԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐՁ

- Ժամը 03:45 Ինտիփենսիթիթ Տէլ Վայ (Էք.) - Աթլ. Նասիոնալ (Զուլ.)
- ԹԵՆԻՍԻ ՏՐՈՅ ՌԱԵՆԿԱԹԵՆԻ ՄՐՑԱԵՄՐԵԻ 2-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ
- Ժամը 19:00 euronews 1 կայանէն,
- ԶԵՏԵԼԱՐԸՄԻ ՖՐԱՆՍԱԿԻ ԵՐԶԱՎԱԶՔԻ 17-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ
- Ժամը 14:15 Պեռնէս Էմոսոն, eurosport 1 կայանէն,

## Պասքէթպոլ Եւրոպայի Մինչեւ 20 Տարեկան Ախոյեանութիւն

### Հայաստան Կը Պարտուի

Եւրոպայի պասքէթպոլի երիտասարդական ախոյեանութեան Բ. դասակարգի մրցումներու առաջին հանգրուանին հայաստան մրցեցաւ Մակեդոնիայի դէմ եւ պարտուիւն կրեց 56-67 հաշիւով: Մրցումին սկիզբը հայ պասքէթպոլիստները յառաջացած էին, սակայն վերջաւորութեան տեղի տուին եւ պարտուեցան: Երկրորդ հանգրուանին, Հայաստան մրցեցաւ Փորթուկալի դէմ եւ զիջեցաւ 54-70 հաշիւով: Երրորդ մրցումին հաւաքակազմը կրեց իր երրորդ պարտութիւնը, երբ զիջեցաւ Սոլթսթանի 44-78 հաշիւով: Իսկ մինչեւ 16 տարեկան տղոց հաւաքակազմը Եւրոպայի Գ. դասակարգի իր առաջին մրցումին պարտուեցաւ Անտոքրայէն 48-71 հաշիւով: Երկրորդ մրցումին ալ Հայաստանի տղաքը զիջեցան Մոլտովային 51-75 հաշիւով:

## Լիբանանի Պասքէթպոլի Աղջկանց Բ. Դասակարգի Ախոյեանութեան Աւարտականի Առաջին Մրցումին՝ ԶԵՆ Անդրանիկ Սեւան Պարտութեան Մատնեց Անուարը

Լիբանանի պասքէթպոլի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան տիտղոսի եզրափակիչի առաջին մրցումին, ԶԵՆ Անդրանիկ Սեւան՝ 57-48 արդիւնքով (կիսախաղ՝ 28-21) պարտութեան մատնեց Անուարը: Մրցումը տեղի ունեցաւ ԶԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի «Անդրանիկ» մարզադաշտին մէջ:

Հանդիպումը, իրաւարարին առաջին սուլիչէն մինչեւ աւարտը ընթացաւ ԶԵՆ Անդրանիկ Սեւանի աղջիկներուն առաւելութեամբ: Անուարի մարզումիները լաւ պատրաստուած էին սոյն մրցումին, սակայն ԶԵՆ Անդրանիկ Սեւանի աղջիկները շնորհիւ իրենց խմբային գեղեցիկ խաղադաճին, յաջողեցան չեզոքացնել հակառակորդին յարձակումները եւ արժանի յաղթանակ մը պարգեւել իրենց համակիրներուն:

Ախոյեանութեան տիտղոսին համար Նախատեսուած եզրափակիչի երեք մրցումներէն երկրորդը տեղի պիտի ունենայ Հորեքշաբթի, 20 Յուլիս 2016, երեկոյեան ժամը 8-ին, ԶԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի «Անդրանիկ» մարզադաշտին մէջ: Երկրորդ յաղթանակ մը արձանագրելու պարագային, ԶԵՆ Անդրանիկ Սեւան ինքնաբերաբար պիտի նուաճէ Լիբանանի պասքէթպոլի աղջկանց Բ. Դասակարգի ախոյեանութեան տիտղոսը: ԶԵՆ Անդրանիկ Սեւանի համակիրներէն կ'ակնկալուի քաջալեր հանդիսանալ իրենց խումբին:

Անգամ մը եւս կը շնորհաւորենք ԶԵՆ Անդրանիկ Սեւանը, անոր մարզչական կազմը եւ պատասխանատուները այս փայլուն յաղթանակին առիթով:

## Վոլիպոլ Աշխարհի Ախոյեանութիւն

### Սերպիա Տիտղոսակիր Առաջին Անգամ Ըլլալով



Վոլիպոլի աշխարհի լիկայի աւարտական մրցումին Սերպիան յաղթեց Պրագիլին 25-22, 25-22, 25-21 հաշիւով եւ դարձաւ աշխարհի ախոյեան իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով: Պրագիլ այս տիտղոսը շահած է 9 անգամ: Երրորդ դիրքի մրցումին, անցեալ տարուան ախոյեան Ֆրանսան յաղթեց Իտալիոյ 3-0 սեթերու հաշիւով:

## Յեծելարջալ Ֆրանսայի Երջակազք

### Փիթըր Սական Շահեցաւ Մրցումը



Յուլիս 18-ին տեղի ունեցաւ հեծելարջալի աշխարհի ամենա-նշանաւոր մրցումին՝ Ֆրանսայի շրջակազքին 16-րդ հանգրուանը: Այս հանգրուանի մրցումը տեղի ունեցաւ Մուարան Ան Մոնթանիէն Չուիցերիոյ մայրաքաղաքը՝ Պեռն, 209 քմ հեռաւորութեամբ: Մրցումին առաջին դիրքը գրաւեց սլովաք Փիթըր Սականը ռուսական «Թիլքոֆ» խումբէն, սփրինգով շրջանցելով ռուսական «Քաթիուշա» խումբի Ալեքսանտր Զիրսթօֆը: Ստորեւ տեսնել մրցումին դասաւորումը.

- 1-Փիթըր Սական - Սլովակիա, Թիմ Թիլքոֆ, 4:26.02 ժամ.
- 2-Ալեքսանտր Զիրսթօֆ - Նորվեկիա, Թիմ Զաթիուշա, Նոյն ժամանակը,
- 3-Սոնտրէ Զոլսթ Էնկըր - Նորվեկիա, Այ Էլ Էմ Սայլիսկ, Նոյն ժամանակը,
- Ստորեւ տեսնել ընդհանուր դասաւորումը 16 հանգրուան ետք.
- 1-Զիրսթօֆըր Ֆրուս - Բրիտանիա, Թիմ Սքայ, 72:40.38 ժամ
- 2-Պաուլէ Մոլեմա - Հոլանտա, Թրեք Սեկաֆրեո, 1.47 վայրկեան ուշ,
- 3-Ատամ Ելեյ - Բրիտանիա, Օրիքա Պայք Էքսէլեմ, 2.45 վայրկեան ուշ,

Հ.Բ.Ը.Մ.-Ն.Ե.Ը.

## ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԱՂՋԿԱՆՑ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄՐՑՈՒՄԸ

ԶԵՆ Անդրանիկ Սեւանի Բ. Դասակարգի Աղջիկները Աւարտական հանգրուանի Ա. մրցումը փայլուն յաղթանակով աւարտելէ ետք Անուար խումբին, յաջող մրցումը պիտի կատարեն Հորեքշաբթի, 20 Յուլիս 2016, երեկոյեան ժամը 8:00-ին 4 ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի, Անդրանիկի մարզադաշտին մէջ: Յաղթելու պարագային պիտի տիրանան Լիբանանի Պասքէթպոլի Բ. Դասակարգի ախոյեանութեան բաժակին:

Կը խնդրուի բոլոր մարզասերներէ եւ միութեանականներէ ի մասնաւորի Անդրանիկ Սեւան մասնաճիւղի անդամներէն ներկայ գտնուիլ քաջալերելու համար Անդրանիկի խումբը:

Մուտքը Ազատ

ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵՄԱՐ ՍՏԱՑԱՆԸ

ԵՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԵՆԱՐԿԱՆՎԱԿԱՆ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԸ ԿՈՎԱԿԱՆ-ԿԱՄՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՆՈՒԹՅԱՆՈՒՄ


Գիրքը

Հեղինակ՝

ՍՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Հրատարակութիւն՝ «Տիգրան Մեծ» հրատարակչութիւն

ԵՐԵՒԱՆ - 2015



## ՊԱՇՏՈՆԵԱՅ ԿՈՒՉՈՒԻ

Ոսկերչատուն մը կարիք ունի օգնական հաշուապահուիկի: Ֆրանսերէն իմացութիւնը պայման է: Գեռ. 01-266514:

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՐԺԱՆԸ

ՈԱԿ Կեդրոնական Վարչութեան եւ ԹՄՍ Հիմնադրներու Մարմնի անդամ ընկեր Հրայր Հովիտեան ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան եւ այժմ կը բոլորէ ապաքինման շրջան: Այս առիթով «Չարթօնք» բարի ապաքինում կը մաղթէ մեր սիրելի ընկերոջ:

Պատանդով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Զեռուա-բար՝ թերթի մէջ իրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտէ խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտած վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

## Մշակութային Յուշատետր

Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան Կազմակերպութեամբ՝ «Կարծես Երազ Մը Ըլլար» Գիրքի շնորհանդէս	«Լ. Շանթ» կ'Կեդրոնի «Գ. Ե. Հ. Արմենեան» սրահին մէջ, Պուրճ Համմուտ	Հորեքշաբթի 20 Յուլիս 2016	Երեկոյեան 8:00
Ազգային իշխանութեան Ոստմանական Խորհուրդի Կազմակերպութեամբ՝ «Պրտօլի եւ Պաքայութեայի Պետական Զննութիւններու Ազգային Վարժարաններէն Յաջողած Հայ Աշակերտներու Գնահատանքի Երեկոյ»	Նորակառոյց Ազգային Միացեալ Վարժարանի Շրջափակին Մէջ	Հորեքշաբթի 20 Յուլիս 2016	Երեկոյեան 8:00
«Ծինիշէան Յիշատակի Ձեռնարկ»ի 50-ամեակի Հանդիսութիւն	Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» հանդիսարահին մէջ	Ուրբաթ 22 Յուլիս 2016	Երեկոյեան 8:00

Պատրաստեց՝ Մարիա Ե.